ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

22 օգոստոսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

115
(2781)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՐՏՈՆՅԱԼ ՕԼԻԳԱՐԽԸ

«Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ-ի սեփականատեր Նարեկ Նալբանդյանը պարտք է պետությանը, վճարման համար ժամանակ է խնդրում, մյուս կողմից էլ՝ բարեգործություն է անում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ծաղկաձորում գտնվող «Գոլդեն Փելիս» հյուրանոցի գնման համար Նարեկ Նալբանդյանը հուլիսի 1-ին պետությանը պետք է վճարեր 1 մլդ դրամ, սակայն չի վճարել, գրավոր խնդրել է իրեն ժամանակ տրամադրել, մինչեւ վճարի: Բնականաբար, բավարարվել է խնդիրը:

Այսինքն՝ դեռ վերջնականապես գնված չէ «Գոլդեն Փելիս» հյուրանոցը, սակայն այն շահագործման հանձնելու քայլեր են արվում: ArmLur.am-ը տեղեկացավ՝ նախօրեին Ծաղկաձորում վառվել են «Գոլդեն Փելիս» հյուրանոցի եւ դեպի հյուրանոց տանող ոլորապտույտ ճանապարհի լույսերը:

Նկատենք, որ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը իր օլիգարխներին աճեցնելու ճանապարհին 2019 թվականին կառավարության ներդրումային ծրագրի շրջանակում 3 տարի ժամկետով հետաձգեց «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ընկերության համար ավելացված արժեքի հարկի վճարման ժամկետը՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ից մինչեւ 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Նախկինում էլ, մեկ այլ որոշմամբ, նույն ընկերությանը ներդրումային ծրագրի շրջանակներում ազատեցին մաքսատուրքից:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ, բացի վերոնշյալ ընկերությունից, Նալբանդյանը բազմաթիվ այլ ընկերությունների սեփականատեր է: Մասնավորապես, նրան է պատկանում «Շիրակ» թռչնաֆաբրիկան, «Նոր Լուսակերտ» թռնչաֆաբրիկայի 50 տոկոս բաժնետերն է: Նա, սակայն, բարեխիղճ չի աշխատում: Մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը 2022 թվականի օգոստոսի 30-ին «Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ» ընկերությանը տուգանել է 3 մլն 44 հազար 534 դրամի չափով, քանի որ Նալբանդյանի ընկերության կողմից արտադրված ECO եւ ecoDemonstrator մակնշումներով հավկիթներն իրացվել էին այն դեպքում, երբ դրանք չեն հանդիսանում հավաստված օրգանական գյուղատնտեսական արտադրանք, ինչը հանձնաժողովը որակել է որպես հասարակության մոլորեցման դրսեւորմամբ անբարեխիղճ մրցակցություն:

Հիշեցնենք նաեւ, որ Նալբանդյանն այն օլիգարխն է, ում կինը քրեական գործի առկայության պայմաններում ձեռք է բերել նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի՝ Մոնումենտում գտնվող, կալանքի տակ եղած առանձնատունը. իրավապահները որեւէ կերպ չեն խոչընդոտել այս գործարքին:

Նման անբարեխիղճ եւ մոնոպոլ բիզնես պատմություն ունեցող օլիգարխ Նալբանդյանը, որը չի կարողանում մարել 1 մլդ պետության պարտքը, նաեւ նախկինում մեծ քանակի տուգանքներ ունի, հովանավորում է Համահայկական խաղերը եւ անգամ ՀՀ նախագահի կողմից պարգեւատրվեց:

Այսինքն՝ «պոզով պոչով կոռուպցիան» մերժող Նիկոլ Փաշինյանը անձնական օգտագործման արտոնյալ օլիգարխներ է աճեցնում:

Նիկոլ Փաշինյանի՝ Սյունիք կատարած օգոստոսի 17-ի այցը նոր ինտրիգ է դարձել ՔՊ-ականների համար: Պագամավորները շտապել են Սյունիք, որ այցը լավ կազմակերպեն, բայց ամեն ինչ արդեն կազմակերպված է եղել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ սյունեցի ՔՊ-ական պատգամավորներ Արմեն Խաչատրյանը, Դավիթ Դանիելյանը եւ Կարեն Համբարձումյանը արդեն տեւական ժամանակ է՝ մրցավազքի մեջ են Սյունիքի մարզպետի պաշտոնի համար եւ երբեք պահը չեն կորցնում, որ Նիկոլ Փաշինյանի աչքին բարձրանան, նշանակվեն մարզպետի բաղձալի պաշտոնին: Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանն այս ընթացքում արել է անհնարինը եւ պատերազմից հետո Նիկոլ Փաշինյանին Սյունիքում «սյունյաց ողջույններով»՝ հայհոյանքներով ընդունող ըմբոստ քաղաքապետերին դարձրել է «նիկոլական»: Եւ տպավորություն էր, որ սյունեցիների դժգոհություններն արդեն անցյալում են, եւ թե՛ սյունեցիները, թե՛ համայնքապետերը հարմարվել են իրավիճակին, որ իրենց գյուղը այս իշխանությունների օրոք դարձել է առաջնագիծ, իսկ մի մասն էլ ուղղակի թշնամու տիրապետության տակ է: Նույնիսկ այս պայմաններում մարդիկ, համաձայն եթերի, արդեն պատրաստ են «սյունյաց» ողջույնի փոխարեն գրկաբաց դիմավորել Փաշինյանին: Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրներն են փոխանցում, Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանին հաջողվել է երկար ջանքերից հետո Սյունիքի երբեմնի ըմբոստ համայնքապետերին հավաքել մի տեղ, որպեսզի պատշաճ դիմավորեն Նիկոլ Փաշինյանին: Նիկոլ Փաշինյանի այցից ժամեր հետո անակնկալ այնտեղ են հայտնվել ՔՊ-ական սյունեցի պատգամավորները Արմեն Խաչատրյանը, Դավիթ Դանիելյանը եւ Կարեն Համբարձումյանը, ու փորձել են ցույց տալ, թե իրենց շնորհիվ է, որ Փաշինյանին ջերմ դիմավորում են Սյունիքում, բայց նրանց ջանքերը ի դերեւ են ելել: Նկատվել է, որ Փաշինյանը սառն է եղել պատգամավորների հետ:

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Կարեն Գիլոյանի գործերը 2022 թվականին լավ են եղել: Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նա բնակարան է գնել Երեւանի կենտրոնում: Փոխնախարարը 31 մլն 600 հազար դրամ արժողությամբ նորակառույց բնակարանի միանձնա սեփականատերն է: Բացի այդ, նա հանդիսանում է 2011 թվականին գնված բնակարանի համասեփականատեր: Փոխնախարարը բանկային հաշիվներին 1 մլն դրամ է ունեցել, իսկ, որպես կանխիկ գումար, նշել է 13 մլն դրամը: Նա մեկ տարվա ընթացքում 17 մլն դրամ է վաստակել աշխատավարձից եւ համալսարաններից, որտեղ դասավանդում է: Գիլոյանը նաեւ 45 մլն դրամի վարկ ունի, որը մարելու համար 2 մլն 500 հազար դրամ է ծախսել: Նշենք, որ Կարեն Գիլոյանը այն պաշտոնյաներից է, որը մշտապես փորձում է հաճոյանալ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին: Վերջինիս էլ, կարծես թե, դուր է գալիս Գիլոյանի «խոնարհ» վիճակը, ինչի համար գրեթե բոլոր քեֆ-հավաքույթներին Գիլոյանը ներկա է, անգամ կիթառ է նվագում՝ հանուն վարչապետի: Դա դրսեւորվեց, երբ մայիսին (երբ Փաշինյանը տիկնոջ՝ Աննա Հակոբյանի եւ դստեր՝ Արփի Փաշինյանի հետ Տավուշի մարզում՝ Դիլիջանի Պարզ լճի տարածքում, հանդիպել էր «ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի մրցաշարի մասնակիցներին) Գիլոյանը շատ բարձր տրամադրությամբ կիթառ էր նվագում խարույկի մոտ: Քրեական ենթամշակույթը մերժող Նիկոլ Փաշինյանի իշխանության սպորտի փոխնախարար Գիլոյանը 2021 թվականի փետրվարին նախարարության անունից շնորհակալագիր էր հանձնել Արտյոմ Կանեւսկոյ անունով, մի քանի քրեական գործով անցնող Արտյոմ Հարությունովին, իսկ հետո հայտարարել. «Ես իսկապես չգիտեմ՝ ինքը քրեական ենթամշակույթ կրող է, թե ոչ, հանցագործ է, թե հանցագործ չէ. ինձ համար չափանիշն այն է, որ մարդը բարեգործություն է կատարել, գտնվում է ազատության մեջ, չի հետախուզվում: Եթե երբեւէ ինչ-որ անցյալ ունեցել է, ես պարտավոր չեմ դա իմանալ»:

Քրեակատարողական ծառայության պետի պաշտոնի համար պայքարը շարունակվում է: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանն ամեն ինչ անում է, որ այդ պաշտոնին նշանակի իր համակուրսեցի Թադեւոս Նիկոլայի Նալբանդյանին, որը ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության պետի տեղակալներից մեկն է: Իսկ, ահա, ուժային կառույցները այլ թեկնածու ունեն: ArmLur.am-ին հասած տեղեկությունների հանաձայն՝ ուժային կառույցներն ակտիվ քննարկումների մեջ են ու ամեն ինչ անում են, որ քրեակատարողական ծառայության պետ նշանակեն ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչության պետ Ալեքսանդր Հակոբյանին: Թե ով կհաղթի այս պայքարում, ժամանակը ցույց կտա: Հիշեցնենք, որ արդեն երկու շաբաթ է, ինչ ՀՀ ԱՆ ՔԿ-ն ծառայությունը պետ չունի, եւ ծառայության պետի պարտականությունները կատարում է առաջին տեղակալ Ամբակում Գրիգորյանը:

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

ՕԴԱՆԱՎԻ ԵՐԹՈՒՂԻ՝ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՈՎ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանն օգոստոսի 17-ին այցելել էր Սյունիքի մարզ Երեւան-Կապան մեկնարկային ավիաչվերթով: Այնտեղ նա ծանոթացել էր «Սյունիք» օդանավակայանում ստեղծված պայմաններին:

Համացանցում մեծ աղմուկ բարձրացրեց այն հանգամանքը, որ Flightradar24 հավելվածը Նիկոլ Փաշինյանին Կապան տանող օդանավի թռիչքի երթուղին ամրագրել է ոչ թե Կապան, այլ Զանգիլան:

Այս առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը մի քանի հարց է ուղղել վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանին:

-Տիկին Բաղդասարյան, ինչպե՞ս կմեկնաբանեք, որ թռիչքներ ամրագրող Flightradar հավելվածն իր կայքում մեր ինքնիշխան տարածքը՝ Կապանը, ներկայացնում է ադրբեջանական տեղանունով:

-Համացանցում տարածված նկարների առնչությամբ ցանկանում եմ տեղեկացնել, որ թռիչքն իրականացվել է Երեւանից Կապան, այդ մեկնարկային թռիչքին մասնակցել է նաեւ վարչապետը: Ինչ վերաբերում է տեղանվանման նշմանը, ասեմ, որ Flighradar-ը չի հանդիսանում պաշտոնական կայք, իսկ տեղանվանման նշումը մեր տիրույթից դուրս է: Մեր Քաղավիացան թրեկերները ճշտում է Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) հետ, այս ընթացակարգով ամեն ինչ հստակ է: Կրկնում եմ՝ Flightaradը պաշտոնական տեղեկություն չի տալիս թռիչքների վերաբերյալ, այն ինտերնետային ռեսուրս է, ուստի թրեկերների կամ տեղանվանման ճշգրտման խնդիրը չի կարող պաշտոնական համարվել:

-Իսկ ե՞րբ եք նկատել խնդիրը եւ ի՞նչ քայլեր եք ձեռնարկել, արդյոք կապվե՞լ եք այդ կազմակերպության հետ՝ պարզաբանում պահանջելու:

-Ես ձեզանից եմ տեղեկացել խնդրի մասին: Ի պատասխան՝ կարող եմ ասել, որ Քաղավիացիայի կոմիտեն զբաղվում է դրանով, այդ հարցերը ճշտում է ԻԿԱՕ-ի հետ:

-Տիկին Բաղդասարյան, փաստացի ստացվում է, որ մեր պաշտոնյաները, օգտվելով այդ թռիչքուղուց, լեգիտիմացնում են Իլհամ Ալիեւի համաշխարհային կեղծիքները, որը ջանք ու եռանդ չի խնայում Հայաստանի ինքնիշխան տարածքը որպես ադրբեջանական ներկայացնելու համար:

-Ես էլի եմ նշում՝ ամրագրման ու մյուս գործընթացների ժամանակ պաշտոնական կայքը նման անվանում չի նշել, իսկ թե ինչ-որ այլ կայք ինչ անվանում է նշել, դա մեր տիրույթում չէ: Ամրագրումը Flightradar-ով չի արվել. եթե պաշտոնական լիներ կայքը, այդ դեպքում մեկնաբանելը տեղին կլիներ, բայց, հղում տալով նաեւ Քաղավիացիայի տեսակետին, իրենք թռիչքի ամրագրման բոլոր գործընթացներով աշխատել են ԻԿԱՕ-ի հետ, եւ որեւէ խնդիր չի եղել, այնտեղ հստակ նշվում է Կապան, իսկ թե այլ կայքում ինչ է նշվում, չեմ կարող մեկնաբանել:

Ի դեպ, հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանի այցից հետո՝ օգոստոսի 18-ի գիշերը, հենց օդանավակայանի հատվածում հերթական միջադեպը եղավ. Սյունիքի մարզի Կապանի «Սյունիք» օդանավակայանի հարակից տարածք եկած անհայտ անձը Ադրբեջանի տարածքից երեք կրակոց է արձակել Կապանի «Սյունիք» օդանավակայանի ուղղությամբ եւ հեռացել: Փամփուշտներից երկուսը վնասել են օդանավակայանի պատուհաններից մեկը եւ տանիքը: Այդ մասին հայտնել էին ՀՀ ԱԱԾ-ից:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐԵՑԻՆ

ՄԻՋԱՆՑՔԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ

«ՄԱԿ ԱԽ՝ տարածաշրջանում իրական, երկարատեւ կայունության հարցում շահագրգռված անդամները պետք է հստակ քայլեր ձեռնարկեն, համադրեն ջանքերը՝ առկա մեխանիզմների արդյունավետ կիրառմամբ խնդրի անմիջական կարգավորմանն ուղղորդելու նպատակով»,- հայտնում է Արտաքին գործերի նախարարությունը:

Հիշեցնենք, որ օգոստոսի 16-ին կայացավ ՄԱԿ Անվտանգության խորհրդի հրատապ նիստ Լեռնային Ղարաբաղում ստեղծված մարդասիրական իրավիճակի առնչությամբ: Երկրներն արտահայտեցին իրենց դիրքորոշումները, բայց դա որեւէ փաստաթղթով չարձանագրվեց: Ինչո՞ւ որեւէ որոշում չընդունվեց: Հայաստանը չէր ներկայացրե՞լ նման փաստաթուղթ: «Ինչպես արդեն նշել ենք, մենք բարձր ենք գնահատում ինչպես այս եւ ՄԱԿ ԱԽ նախորդ՝ դեկտեմբերին կայացած նիստի ժամանակ, այնպես էլ մինչ օրս միջազգային այլ հարթակներում մեր գործընկերների, միջազգային կառույցների կողմից հնչեցված սկզբունքային դիրքորոշումները, որոնք համահունչ են միջազգային անվտանգության ու խաղաղության պահպանման հարցում ՄԱԿ ԱԽ առաջնային մանդատին, մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր արժեքներին եւ, որ գուցե ամենահիրատապն է այս պահին, Ադրբեջանի ագրեսիվ գործողությունների եւ ԼՂ-ում նոր մարդասիրական աղետի կանխարգելման գիտակցմանը: Ընթացակարգային առումով ՄԱԿ Անվտանգության խորհրդի հրատապ նիստի ձեւաչափը քննարկում է, այն չի ենթադրում ուղղակիորեն փաստաթղթի (բանաձեւի կամ հայտարարության) ընդունում: Բացի այդ, ՄԱԿ ԱԽ բանաձեւերի նախագծեր ներկայացնելու եւ քվեարկության դնելու նախաձեռնությամբ հանդես գալու իրավունք ունեն ՄԱԿ ԱԽ 15 (մշտական եւ ոչ մշտական) անդամները. Հայաստանը, չլինելով ՄԱԿ ԱԽ անդամ, նման իրավասություն չունի: Այդքանով գործընթացն ավարտվե՞ց: Բոլորովին ոչ. սա շարունակական գործընթաց է: ՀՀ ԱԳ նախարարությունը շարունակում է ակտիվ աշխատանքները ՄԱԿ եւ այլ հարթակներում: Այսօր միջազգային հանրությունը, ՄԱԿ ԱԽ՝տարածաշրջանում իրական, երկարատեւ կայունության հարցում շահագրգռված անդամները պետք է հստակ քայլեր ձեռնարկեն, համադրեն ջանքերը՝ Լաչինի միջանցքի վերաբացման կարեւորության հարցում ձեւավորված ընկալումը, առկա մեխանիզմների արդյունավետ կիրառմամբ խնդրի անմիջական կարգավորմանն ուղղորդելու նպատակով»,- ասվում է ԱԳՆ տարածած հաղորդագրությունում:

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆՆ ՈՒ ՈՒՂՂԱԹԻՌԸ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը շարունակում է իր շրջագայությունները: «Ինստագրամ»-ի իր էջում նա լուսանկարներ էր հրապարկել ուղղաթիռից:

Թե ում է պատկանում ուղղաթիռը, կամ որտեղ էր արված լուսանկարը, դրա մասին որեւէ տեղեկություն չկա: Լուսանկարին կից Սիմոնյանը միայն մակագրել է՝ Taxi Helicopter:

«Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ նախագահի մամուլի քարտուղար Ծովինար Խաչատրյանից հետաքրքրվեց՝ արդյոք ուղղաթիռը Սիմոնյանին է պատկանում, թե վարձել է, կամ ուր էր մեկնել ուղղաթիռով: Վերջինս էլ պարզաբանեց, որ հարցերն անձնական տիրույթում են, ուստի չի կարող պատասխանել: «Միայն կարող եմ նշել, որ ուղղաթիռը տաքսի է, իսկ լուսանկարը նոր չէ արված»,-ասաց նա:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ ԼՌՈՒՄ Է

Առուշ Առուշանյանը Վահե Հակոբյանի կուսակցության վարչության 2 անդամներից մեկն է: Մինչ հանրությանը շարունակում է ալեկոծել Առուշանյանի *բարեւը* Նիկոլ Փաշինյանին, զարմանալի լռություն է պահպանում Գորիսի քաղաքապետի հարազատ կուսակցությունը: Գործարար, Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի «Վերածնվող Հայաստան» կուսակցությունը առնվազն պետք է դիրքորոշում, ավելին՝ աջակցություն հայտնի Առուշանյանի քայլին, քանի որ Առուշանյանը այդ կուսակցության վարչության երկու անդամներից մեկն է: Իսկ եթե համաձայն չեն նրա հետ, պետք է դատապարտեն Առուշանյանի ջերմությունը Փաշինյանի հետ:

Սակայն ինքը՝կուսակցության նախագահ Վահե Հակոբյանը, պատգամավորի մանդատը հանձնելուց հետո ընդդիմադիր դաշտում չի երեւում, մինչդեռ խոստանում էր շարունակել պայքարը Նիկոլ Փաշինյանի հանցախմբի դեմ:

Փաստորեն, Վահե Հակոբյանի, Առուշ Առուշանյանի պայքարը Նիկոլի ռեժիմի դեմ սահմանափակվում է նրա հետ հարաբերությունների ջերմացմամ՛բ:

Հիշեցնենք, որ ավելի վաղ ArmLur.am-ը արձանագրել էր՝ ՎՀԿ-ն որպես կուսակցություն անցել է պատմության գիրկը՝ դարձյալ ներկայացնելով պատառիկներ հենց կուսակցության կայքից:

ՏԻԳՐԱՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱԿԱՐԻ ԿԱՄՈՒՐՋ

ԽԱՂԱՂԱՊԱՀՆԵՐԻՆ ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ԵՆ

ԱՀ կառավարության՝ ռուսական խաղաղապահ զորախմբի հետ համագործակցության աղահովման կենտրոնից հայտնում են, որ երեկ ՌԴ խաղաղապահների կողմից տեղի է ունեցել Ռուսաստանի եւ Արցախի 41 բաղաքացիների տեղափոխություն Արցախից Հայաստան, որն առաջին դեպքն է հունիսի 14-ից ի վեր: ՌԴ բաղաքացիները վաղուց սպասում էին իրենց տեղափոխությանը, իսկ Արցախի բաղաքացիները ուսանողներ են, որոնք ընդունվել են ՀՀ եւ արտասահմանյան բուհեր: Ըստ խաղաղապահների հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածության՝ առաջիկա օրերին շարունակվելու է ուսանողների եւ ՌԴ բաղաքացիների տեղափոխությունը:



Այնուամենայնիվ, ադրբեջանական կողմը շարունակում է խոչընդոտել բազմաթիվ անձանց երկկողմանի տեղաշարժը: Այս պահի դրությամբ հարյուրավոր քաղաքացիներ Հայաստանում սպասում են Արցախ վերադարձին, շտապ եւ պլանային առողջական հիմքերով 333 անձ հերթագրված է Կարմիր խաչի միջոցով Հայաստան տեղափոխվելու համար՝ չհաշված հումանիտար, աշխատանքային եւ այլ նպատակներով երկկողմանի տեղաշարժի անհրաժեշտությունը հազարավոր անձանց մոտ:

Նշենք, որ ադրբեջանական կողմը շարունակում է նվաստացուցիչ պայմաններ ստեղծել Հակարիի կամրջի մոտ տեղակայված ապօրինի անցակետում՝ ի լրումն Արցախի քաղաքացիների նկատմամբ անօրինական հսկողության ու խոչընդոտների: Մասնավորապես, անձանց կամքին հակառակ՝ ադրբեջանցիները եւ իրենց հրավիրած լրագրողները հերթական անգամ նկարահանել են նրանց դեմքերը եւ օգտագործել քարոզչական նպատակներով: Բացի դրանից, ադրբեջանական կողմը թույլ չի տվել ՌԴ խաղաղապահ զորակազմի մեքենաները անցնեն Հակարիի կամուրջը՝ ստիպելով ուղեւորներին իրենց բեռներով հանդերձ ոտքով անցնել կամուրջը, որից հետո Գորիսից ընդառաջ եկած մեքենաներով շարունակել են ճանապարհը:

Հավելենք, որ հունիսի 15-ից առ այսօր Ադրբեջանը շարունակում է արգելել Հայաստանից Արցախ բոլոր հումանիտար բեռների տեղաշարժը, ինչի հետեւանքով օրեցօր խորանում է հումանիտար աղետն Արցախում: Իսկ ՀՀ Սյունիքի մարզի Կոռնիձոր համայնքում՝ Լաչինի միջանցքի մուտքի մոտ, հուլիսի 26-ից շարունակում է կասեցված մնալ Արցախի համար ՀՀ կառավարության կողմից ուղարկված շուրջ 400 տոննա հումանիտար աջակցությունը:

Ադրբեջանական ապօրինի անցակետով քաղաքացիների անցումը որեւէ կերպ չի փոխում Արցախի Հանրապետության կառավարության դիրքորոշումը Լաչինի միջանցքում գործող այդ անցակետի եւ ադրբեջանական մնացած խոչընդոտների վերաբերյալ: Արցախի Հանրապետության կառավարությունը շարունակում է պնդել, որ պետք է ամբողջությամբ վերականգնվի անձանց, մեքենաների ու բեռների անխափան ու երկկողմանի տեղաշարժը Լաչինի միջանցքով, առանց ադրբեջանական որեւէ միջամտության՝ համաձայն 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության եւ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի 2023թ. փետրվարի 22-ի եւ հուլիսի 6-ի հրամանների:

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

Առաջիկա շաբաթները քաղաքական դաշտում թեժ են լինելու: Ինչպես հայտնի է, Երեւանի ավագանու հերթական ընտրությունները տեղի կունենան սեպտեմբերի 17-ին: Օգոստոսի 23-ից մեկնարկում է ընտրական քարոզարշավը, այն կավարտվի սեպտեմբերի 15-ին: Քվեարկության եւ դրան նախորդող օրը ցանկացած քարոզչություն արգելվում է:

Իսկ ովքե՞ր են առաջադրված թեկնածուները

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության քաղաքապետի թեկնածուն նախկին փոխվարչապետ Տիգրան Ավինյանն է: Նա 2022 թվականի սեպտեմբերի 23-ին ընտրվել է Երեւանի փոխքաղաքապետ:

ԱԺ նախկին պատգամավոր Անդրանիկ Թեւանյանը «Մայր Հայաստան» դաշինքի քաղաքապետի թեկնածուն է:

2021-ի ամռանը հիմնադրված «Ապրելու երկիր» կուսակցության նախընտրական ցուցակը կգլխավորի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախկին նախարար Մանե Թանդիլյանը:

Հայաստանի Եվրոպական կուսակցության քաղաքապետի թեկնածուն կուսակցության ղեկավար Տիգրան Խզմալյանն է:

2021-ին հիմնադրված «Արդար Հայաստան» կուսակցության քաղաքապետի թեկնածուն փաստաբան Նորայր Նորիկյանն է:

«Հանրապետություն» կուսակցության քաղաքապետի թեկնածուն արդարադատության նախկին նախարար Արտակ Զեյնալյանն է, նախընտրական շտաբը կղեկավարի կուսակցության նախագահ Արամ Սարգսյանը:

Էդմոն Մարուքյանի ղեկավարած «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախընտրական ցուցակը կգլխավորի Դավիթ Խաժակյանը: 2018 թվականից նա Երեւանի ավագանու անդամ է, ավագանու «Լույս» խմբակցության ղեկավարը:

«Հաղթանակ» կուսակցության քաղաքապետի թեկնածուն Վիկտոր Մնացականյանն է:

«Ուժը հայրենյաց» կուսակցության թեկնածուն իրավաբանական գիտությունների թեկնածու Նելլի Հարությունյանն է:

«Միացյալ Հայաստան» կուսակցության նախընտրական ցուցակն էլ կգլխավորի կուսակցության նախագահ Երվանդ Թարվերդյանը:

Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը եւս կմասնակցի սեպտեմբերին կայանալիք Երեւանի ավագանու ընտրություններին՝ գլխավորելով «Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակը:

«Հանրային ձայն» կուսակցության քաղաքապետի թեկնածուն Տիգրան Ուրիխանյանն է:

Հավելենք, որ ավագանու ընտրություններին առաջադրվել են 14 ուժ:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԱՐՈՒԹՅԱՆԻ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քաղաքապետի թեկնածու, Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը քարոզարշավի մեկնարկի օրը՝ օգոստոսի 23-ին, նախընտրական դրամահավաք է կազմակերպելու: Դրամահավաք-երեկոն տեղի կունենա «Հոլիդեյ ինն» հյուրանոցում, Մարությանն անձամբ է մասնակցելու դրան:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ նաեւ, որ Հայկ Մարությանն իր քարոզարշավը կսկսի օգոստոսի 24-ից: Հավելենք, որ միջոցառումը փակ է լինելու լրատվամիջոցների համար:

Հիշեցնենք, որ Հայկ Մարությանն ավագանու ընտրություններին մասնակցելու է «Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակով:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԹՎԻ ԱՎԵԼԱՑՈՒՄ

Հայաստանում կարմրուկի լաբորատոր հաստատված դեպքերի թիվը մեկ շաբաթում ավելացել է 8-ով եւ հասել է 392-ի:

Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացել է ՀՀ առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման եւ կանխարգելման ազգային կենտրոնի տարածած հաղորդագրությունից:

«Վարակվածներից 3-ը հոսպիտալացվել է, 243-ը դուրս են գրվել հիվանդանոցից»,- ասված է հաղորդագրությունում:

Վարակվածներից 275-ը երեխաներ են, 117-ը՝ մեծահասակ:

ՊՆ–Ն ՀԵՐՔՈՒՄ Է

Հայաստանի պաշտպանության նախարարությունը հերքում է Ադրբեջանի պաշտպանության նախարարության հաղորդագրությունն այն մասին, թե, իբր, Հայաստանի զինված ուժերի ստորաբաժանումները կրակել են սահմանագոտու արեւելյան հատվածում տեղակայված ադրբեջանական դիրքերի ուղղությամբ:

«Ադրբեջանի ՊՆ հաղորդագրությունն այն մասին, թե, իբր, ՀՀ ԶՈՒ ստորաբաժանումներն օգոստոսի 21-ին՝ ժամը 10:25-10:30-ն ընկած ժամանակահատվածում, կրակ են բացել սահմանագոտու արեւելյան հատվածում տեղակայված ադրբեջանական դիրքերի ուղղությամբ, հերթական ապատեղեկատվությունն է»,- ասված է ՊՆ կողմից տարածված հաղորդագրության մեջ:

ՆՈՐ ՇԱՐԺԱԿԱԶՄԵՐ

Շուտով Երեւանի մետրոպոլիտենում շահագործվող 1976 թվականի արտադրության շարժակազմերը կփոխարինվեն նորերով: Այս մասին հայտնում են Երեւանի մետրոպոլիտենից:

Երեւանի մետրոպոլիտենում աշխատանքներն ընթանում են բնականոն հունով: Հաշվետու ժամանակահատվածում ուղեւորափոխադրումների թիվը կազմել է 414 հազար 040 ուղեւոր:

Գիծ են դուրս բերվել 2785 շարժակազմ:

Փոխարինվել են 59 փայտակոճեր:

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՊՆ ՊԱՇՏՈՆՅԱՆ ԿԱՇԱՌՔ Է ՊԱՀԱՆՋԵԼ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում խաղաքաղաքացու կողմից տրված հաղորդման հիման վրա իրականացված օպերատիվ-հետախուզական միջոցառումների, ինչպես նաեւ քննչական եւ այլ վարութային գործողությունների արդյունքում բացահայտվել են ՀՀ պաշտպանության նախարարության պաշտոնատար անձի կողմից խաղաքաղաքացիներից պարբերաբար 150-170 հազար ՀՀ դրամի չափով կաշառք պահանջելու դեպքեր:

Մասնավորապես՝Հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված վարույթով կատարված նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ-ում քաղաքացիություն ստացած Մ. Վ.-ն անձնագիր ստանալուց առաջ Ջինված ուժերում հաշվառման կանգնելու համար 2023 թվականի մայիսի 2-ին համապատասխան փաստաթղթեր է ներկայացրել ՊՆ զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայություն: Այնուհետեւ՝ նույն օրը, հիշյալ քաղաքացուն զանգահարել է Ռ. Գ.-ն եւ առաջարկել փաստաթղթերն ավելի վաղ ժամկետում տրամադրելու, ինչպես նաեւ հետագայում վարժական հավաքներին չկանչելու գործընթացը կազմակերպելու դիմաց 150.000 ՀՀ դրամ կաշառք տալ Պաշտպանության նախարարության պաշտոնատար անձին:

Դրանից հետո քաղաքացին հաղորդում է ներկայացրել Հակակոռուպցիոն կոմիտե՝ իրենից կաշառք պահանջելու վերաբերյալ, որի հիման վրա՝ Կոմիտեում նախաձեռնված վարույթի շրջանակում իրականացվել է «Կաշառք տալու նմանակում» գաղտնի քննչական գործողություն, որի ընթացքում ՊՆ զորակոչային եւ զորահավաքային ծառայության պլանավորման եւ վերլուծության բաժնի սպա, մայոր Ս. Մ.-ն իր ծանոթ Ռ. Գ.-ի օժանդակությամբ 150.000 ՀՀ դրամ կաշառք է ստացել Մ. Վ.-ից: Կաշառք ստանալուց անմիջապես հետո մայոր Ս. Մ.-ն եւ վերջինիս օժանդակած անձը՝Ռ. Գ.-ն, Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության աշխատակիցների կողմից ձերբակալվել են:

Քրեական վարույթով կատարված նախաքննությամբ բացահատվել են նաեւ զինվորական հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերը կարճ ժամկետում տրամադրելու համար ՊՆ նույն պաշտոնյայի կողմից եւս 4 քաղաքացիներից կաշառք պահանջելու եւ ստանալու դեպքեր, որոնք իրականացվել են հետեւյալ եղանակով: Կ. Մ.-ն զորահավաքային վարչություն դիմած անձանց տվյալներն ուղարկել է իր ծանոթ Ռ. Գ.-ի կնոջ բջջային հեռախոսահամարին: Վերջինս էլ, իր հերթին, դրանք վերահասցեագրել է ամուսնու հեռախոսահամարին, որից հետո Ռ. Գ.-ն կաշառք ստանալուն նպաստելու նպատակով հեռախոսակապ է հաստատել նշված անձանց հետ եւ տեղեկություններ տրամադրելու եղանակով կատարել օժանդակություն՝ զինվորական հաշվառման համար անհրաժեշտ փաստաթղթերը կարճ ժամկետում տրամադրելու համար նրանց ներկայացրել է կաշառք տալու առաջարկ:

Վերը նկարագրված եղանակով Կ. Մ.-ն չորս դեպքում՝ Ռ. Գ.-ի օժանդակությամբ, իսկ մեկ դեպքում անձամբ 2023 թվականի ապրիլից մայիսն ընկած ժամանակահատվածում 5 անձանցից պահանջել է ընդհանուր շուրջ 650 հազ. ՀՀ դրամ կաշառք: Ընդ որում՝ նշված անձանց մոտ կաշառք տալու վճռականություն հարուցելու նպատակով Ռ. Գ.-ն վերջիններիս հայտնել է, որ այդկերպ հաշվառվելուց հետո հետագայում նրանք վարժական հավաքներին չեն կանչվելու այն դեպքում, երբ Կ. Մ.-ի ծառայողական պարտականությունների մեջ չի մտել հաշվառման համար դիմած քաղաքացիներին վարժական հավաքներին ներգրավումը:

Վերը նշված հանցավոր արարքների կատարման համար Կ. Մ.-ին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 1-ին մասով (5 դրվագ), իսկ Ռ. Գ.-ին՝46-435-րդ հոդվածի 1-ին մասով (4 դրվագ):

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ՉԱՐԱՇԱՀՈՒՄ

ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻՆ

ՀՀ քննչական կոմիտեի Գեղարքունիքի մարզային քննչական վարչությունում ավարտվել է «Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի կողմից չարաշահումներ կատարելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Վարույթի շրջանակներում իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել եւ հիմնավորվել է, որ «Մեծ Մասրիկ գյուղի տարրական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը, 2008 թվականի ապրիլից զբաղեցնելով հիշյալ պաշտոնը, իր լիազորություններն օգտագործելով, իրեն վստահված գույքը հափշտակելու միասնական դիտավորությամբ, կատարել է պաշտոնեական կեղծիք:

«Մասնավորապես, քննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ տնօրենը պաշտոնավարման ընթացքում իր հետ մտերիմ հարաբերությունների մեջ գտնվող թվով ութ անձանց հրամանագրել է ՊՈԱԿ-ի տարբեր հաստիքներում եւ վերջիններիս աշխատանքի չհաճախելու պայմաններում կազմել, իր ստորագրությամբ եւ դպրոցի կնիքով վավերացրել է պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող, բովանդակությամբ կեղծ աշխատաժամանակի հաշվարկի եւ աշխատավարձի վճարային տեղեկագրերը, դրանց մեջ ներառել է ակնհայտ կեղծ տեղեկություններ այն մասին, թե, իբր, հիշյալ անձինք հաճախել են աշխատանքի եւ կատարել են իրենց աշխատանքային պարտականությունները:

Այնուհետեւ բովանդակությամբ կեղծ պաշտոնական փաստաթղթերը ներկայացվել են վճարման, որի արդյունքում նրանց փոխարեն եւ նրանց անվամբ պետական բյուջեի միջոցներից դուրս են գրվել ընդհանուր 13.643.343 ՀՀ դրամ աշխատավարձի գումարներ, որոնք յուրացման եւ վատնման եղանակով հափշտակվել են տնօրենի կողմից:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ դպրոցի տնօրենին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 445-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) եւ 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ):

Նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու համար ուղարկվել են հսկող դատախազին:

Նախաքննության ընթացքում դպրոցի տնօրենը պատճառված վնասից վերականգնել է 3 մլն 700 հազար ՀՀ դրամը:

Պատճառված վնասի մնացած մասը վերականգնելու իրավական երաշխիքներ ապահովելու նպատակով, վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, դպրոցի տնօրենի անշարժ եւ շարժական գույքի նկատմամբ արգելանք է կիրառվել»,- ասված է ՔԿ-ի տարածած հաղորդագրությունում:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԻՆՉՈ՞Ւ Է ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերած Աննա Արեւշատյանն իրավապահներին մեկը մյուսի հետեւից հակասող տեղեկություններ է հայտնել, թե ինչ նպատակով է դստեր հետ այդպես վարվել ու նկարահանել նրան:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ կնոջ հեռախոսը առգրավելով՝ իրավապահները բացահայտել են, որ կնոջ հեռախոսում նմանօրինակ տեսանյութերը բավականին շատ են: Ասել է թե՝ Աննա Արեւշատյանը նմանօրինակ տեսարաններ շատ է պատրաստել ու նկարահանել: Ավելին՝ իրավապահների մոտ քննության սկզբում վարկածներից մեկը եղել է այն, որ նա, երեխայի հետ այդկերպ վարվելով, փորձել է պատժել հոր դեմ ցուցմունք տալու համար, սակայն քննության ընթացքում առավել խորքային բացահայտումներ են արվել ընտանիքում առկա անառողջ մթնոլորտի մասով, որի ուղղությամբ այս պահին իրավապահները աշխատում են:

Չի բացառվում, որ քննությամբ ավելի ուշ բացահայտվի, որ համացանցում կան հատուկ էջեր, որտեղ նմանօրինակ տեսանյութեր պատրաստողին վճարում են, ու Աննա Արեւշատյանը կոնկրետ այդ նպատակով է դստեր հետ այդպես վարվել ու նկարել: Դատելով այս դեպքից՝ իրավիճակը կբարդանա, ու գործով այլ անձինք կներգրավվեն՝ տեսանյութի պատվիրատուներ, այն տարածողներ եւ այլն:

Հիշեցնենք՝ քրեական վարույթով պարզվել է, որ Աննա Արեւշատյանն իր 12-ամյա դստեր մասնակցությամբ մանկական պոռնոգրաֆիա ստեղծելու, այն հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով այլ անձանց սեռական կարիքները բավարարելու նպատակով իրացնելու դիտավորությամբ, անչափահաս դստեր նկատմամբ դաժան վերաբերմունք դրսեւորելով, ստեղծել եւ իրացրել է մանկական պոռնոգրաֆիա: Մանկական պոռնոգրաֆիայի ստեղծման ժամանակ անչափահաս դստերը պատճառել է ֆիզիկական ուժեղ ցավ, նրա նկատմամբ բռնություն գործադրելով՝կատարել է սեքսուալ բնույթի գործողություններ, իսկ պոռնկագրական բնույթի նյութի պատրաստմանը ներգրավել է նաեւ իր 12 տարին չլրացած երկու աղջիկ երեխաներին: Կինն իրեն մեղավոր է ճանաչել եւ կալանավորված է:

Աննա Արեւշատյանի ամուսինն էլ կալանավորված է սեփական երեխաների նկատմամբ սեռական բռնություն գործադրելու համար:

Նշենք նաեւ, որ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք ցուցաբերած կինը դեռեւս գտնվում է ոստիկանության ձերբակալված անձանց պահման վայրում՝ ՁՎՊ: Օգոստոսի 20-ին, դատարանի որոշմամբ, նա կալանավորվեց, սակայն նրան դեռ «Աբովյան» ՔԿՀ չեն տեղափոխել, քանի որ կնոջ մասնակցությամբ քննչական գործողությունները շարունակվում են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝օգոստոսի 18-ից 21-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 153 դեպք, որոնցից 6-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

33 ԱՂԲԱՎԱՅՐ՝ ՏԱՎՈՒՇՈՒՄ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝ նրան հարցնելով, թե Տավուշի մարզում ներկայումս քանի աղբավայր է գործում, դրանցից քանիսն ունի համապատասխան հողահատկացում, քանիսն է համապատասխանում ՀՀ օրենքներով աղբավայրերին ներկայացվող պահանջներին: Մարզպետարանից ստացված պատասխանում գրված է. «Մարզի տարածքում գործում է 33 աղբավայր, ինչը տարածքային եւ շահագործման հնարավորությունների տեսանկյունից բավարարում է մարզի բակչության եւ տնտեսավարող սուբյեկտների կողմից առաջացրած կոմունալ-կենցաղային թափոնների, աղբի տեղափոխման եւ աղբավայրում տեղադրման պահանջները: Աղբավայրերի տարածքները համայնքների խոշորացումից առաջ, նախկին 32 համայնքների ավագանիների նիստերի որոշումներով, հատկացված են որպես աղբավայր՝ բացառությամբ Իջեւան համայնքի վարչական տարածքում գտնվող Լուսաձոր-3 աղբավայրի, ինչի տարածքը մասնավոր սեփականություն է եւ վարձակալված է Իջեւանի համայնքապետարանի կողմից: Աղբավայրը սպասարկում է Իջեւան քաղաքի, Ենոքավան, Լուսաձոր եւ Ակնաղբյուր բնակավայրերի կոմունալ-կենցաղային կարիքները: Աղբավայրերը մասամբ են համապատասխանում ՀՀ օրենքներով եւ այլ իրավական ակտերով նախատեսված նորմատիվա-տեխնիկական պահանջներին: Այդ պահանջներին առավել համապատասխանում է վերջին ժամանակներս Նոյեմբերյան համայնքի Այրում բնակավայրի հարակից տարածքում կառուցված աղբավայրը»:

ՈՉ ՄԻ ՍՊԱՆԴԱՆՈՑ ՉԿԱ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ ուղարկել՝հարցնելով, թե մարզի համայնքներում քանի սպանդանոց է գործում: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է. «Մարզում գործում է 3 սպանդանոց Նոյեմբերյան (ք. Նոյեմբերյան), Բերդ (ք. Բերդ), Իջեւան (Գետահովիտ) համայնքներում: Դիլիջան համայնքում սպանդանոց չկա, ֆերմերներն օգտվում են Իջեւանի սպանդանոցի ծառայություններից»: Մարզպետարանի հայտնած տեղեկատվությանը հավելեմ, որ Բերդ համայնքի Նավուր գյուղում սպանդանոցի շինարարությունն ավարտին է մոտենում, սակայն սպանդանոցի սեփականատեր, երկար տարիներ Նավուր համայնքը ղեկավարած Արամ Նիգոյանն ասում է, որ իր սպանդանոցը կգործի, եթե անասունների մորթն անպայման սպանդանոցներում կատարելու պահանջի հարցում իշխանությունը հետեւողական լինի: Տավուշի մարզպետի այն պնդումը, թե Դիլիջանի ֆերմերներն օգտվում են Իջեւանի սպանդանոցից, իրականությանը չի համապատասխանում. անհավատալի է, որ եթե Դիլիջան քաղաքում մի ոչխար, այծ, խոզ կամ կով են մորթում, այդ անասունը բարձում են բեռնատարին, քշում 34 կիլոմետր, հասնում Իջեւանի սպանդանոց, անասունն այնտեղ մորթում եւ վերադառնում Դիլիջան:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԲԱՆԱԿԱՅԻՆ ԽԱՂԵՐԸ ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ

Մ. Մելիքյանի անվան ռազմամարզական վարժարանում տեղի ունեցավ ուժային կառույցների միջեւ առաջին անգամ անցկացվող բանակային խաղերի բացման հանդիսավոր արարողությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ միջոցառմանը ներկա էին ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ, պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանը, ուժային գերատեսչությունների ներկայացուցիչներ ու պաշտոնատար այլ անձինք:

Հաջողություն եւ ազնիվ մրցապայքար մաղթելով խաղերի մասնակիցներին՝ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ գեներալ-լեյտենանտ Էդվարդ Ասրյանը համոզմունք են հայտնել, որ այս խաղերն առավել կամրապնդեն ուժային կառույցների ներկայացուցիչների մարզական մրցակցության ոգին եւ գործընկերային փոխգործակցությունը, իսկ առաջին անգամ անցկացվող այսօրինակ բանակային մրցաշարը կդառնա ամենամյա եւ ավանդական:

Բանակային խաղերին մասնակցում են ՀՀ պաշտպանության, ներքին գործերի, արդարադատության նախարարությունների, Ազգային անվտանգության ծառայության, Պետական եկամուտների եւ Քննչական կոմիտեների, դատախազության եւ Պետական պահպանության ծառայության հավաքական թիմերը, որոնք շուրջ մեկ շաբաթ կպայքարեն մի քանի մրցաձեւերում:

Բանակային խաղերի բացման արարողությունը եզրափակվեց հավաքական թիմերի հանդիսավոր երթով եւ ՀՀ ԶՈՒ երգի եւ պարի համույթի ելույթով:

Հիշեցնենք՝ բանակային խաղերում ներառված են լինելու հետեւյալ մարզաձեւերը՝ բանակային քառամարտ, որն ընդգրկում է ձգումներ պտտաձողից (կանանց դեպքում՝ իրանի ծալում եւ տարածում), վազք՝ 100 մ եւ 3000 մ (կանանց համար՝ 1000 մ) եւ նռնակի նետում նշանակետին մրցաձեւերը, ռազմականացված կրոսավազք (փոխանցումավազք), որը կիրականացվի թե՛ անհատական, թե՛ թիմային ձեւերով, այս պարագայում արդեն փոխանցումավազքով, ամեն կառույցից՝ 3-ական մասնակից: Մարզաձեւի էությունը վազքն է, այնուհետեւ թիրախի խոցումն ավտոմատով, նորից վազք, ապա նռնակի նետում վարժությունների կատարումը, կողմնորոշում, որն իրականացվելու է որոշակի տեղանքի համար տրվող քարտեզով, տեղանքում առանձնացվելու են ստուգողական կետեր, քարտեզով տրվելու են նաեւ դրանք գտնելու հերթականությունը, եւ էլեկտրոնային կրիչով գրանցվելու է յուրաքանչյուր կետին մոտենալու հանգամանքը: Մասնակիցները, ինչը կարեւոր է, կարող են օգտագործել միայն ոչ էլեկտրոնային կողմնացույց, 3 տարբեր հրաձգության ձեւեր են՝ տարբեր դիրքերով՝ հրաձգություն «ԱԿ 74» ինքնաձիգից, հրաձգություն «ՊՄ» ատրճանակից, հրաձգություն «ԴԴՀ» հրացանից: Հրաձգությունը պետք է կազմակերպվի՝ Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի կողմից հաստատված հրաձգության ձեռնարկի համաձայն:

Նշենք նաեւ, որ բանակային խաղերի մրցանակային ֆոնդը 30 միլիոն դրամ է կազմում: Առաջին, երկրորդ, երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները կպարգեւատրվեն հավաստագրերով, մեդալներով եւ դրամական պարգեւներով, առաջին տեղը գրաված թիմերը՝գավաթներով: Առաջին տեղի համար նախատեսված է 1 մլն դրամ պարգեւ, 2-րդ տեղի համար՝500 հազար դրամ, 3-րդ տեղի համար՝300 հազար դրամ: Փոխանցումավազքի մրցանակակիր թիմերը կպարգեւատրվեն համապատասխան գավաթով, իսկ յուրաքանչյուր մասնակից՝ մեդալներով, պատվոգրերով եւ դրամական պարգեւներով: 1-ին տեղի համար յուրաքանչյուր մասնակից կստանա 300 հազար դրամ, 2-րդ տեղի համար՝ 200 հազար դրամ, 3-րդ տեղի համար՝ 150 հազար դրամ:

ՈՒՇԱԳՐԱՎ

ԴԻՄՈՒՄՆԵՐ՝ ՄՆԴԻ ՀԱՄԱՐ

ԼՂ սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունը տեղեկացնում է, որ ս.թ. օգոստոսի 22-ից կվերսկսվի սննդամթերքի տրամադրման համար գրավոր դիմումների ընդունման գործընթացը:

«Հաշվի առնելով նախարարության պահեստներում առկա սննդամթերքի սակավությունը, աշխատակիցների ծանրաբեռնվածությունը, դիմումների մշակման եւ ապրանքների տեսակավորման աշխատատարությունը՝ գերատեսչությունից խնդրում են.

- նախարարություն ներկայանալ՝ նախօրոք ունենալով պատրաստի դիմում,
- դիմումի մեջ լրացնել բոլոր պարտադիր պահանջները (անուն, ազգանուն, հայրանուն եւ հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական քարտի համարը)),
- դիմումին կցել դիմումատուի անձնագրի եւ հանրային ծառայությունների համարանիշի պատճենը,
- դիմումը հանձնելուց հետո սպասել նախարարության կողմից հեռախոսազանգի,
- յուրաքանչյուր ընտանիքի կողմից ներկայացնել միայն մեկ դիմում՝ նշելով ընտանիքի մյուս անդամների անձնական տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն եւ հանրային ծառայությունների համարանիշը),
- դիմում ներկայացնելուց հետո կրկնակի դիմում չներկայացնել,
- դիմում ներկայացնել սննդամթերքի խիստ անհրաժեշտության դեպքում:

Հուսով ենք՝ ըմբռնումով կմոտենաք ստեղծված իրավիճակին»,-ասվում է հաղորդագրության մեջ:

ԵՐԵՎԱՆԸ՝ ԱՄԵՆԱՏԱՐԱԾՎԱԾ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

Թավշյա սեզոնի ընթացքում արտերկրում հանգիստը կազմակերպող ռուսաստանցիների շրջանում Երեւանը դարձել է երկրորդ ամենատարածված ուղղությունը: Այս մասին հաղորդում է Газета պարբերականը՝վկայակոչելով OneTwoTrip-ի վերլուծաբանների ուսումնասիրությունը:

Նախընտրելի ուղղությունների շարքում Երեւանը զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը. դեպի Հայաստանի մայրաքաղաք կատարվել է ամրագրումների 4,3 %-ը: Ըստ ուսումնասիրության արդյունքների՝Երեւանն այս տարի 34,4 %-ով ավելի պահանջված է դարձել:

Առաջին հորիզոնականում է Ստամբուլը, որին բաժին է ընկնում արտասահմանյան բոլոր ամրագրումների 8,9 %-ը, սակայն տարվա ընթացքում քաղաքի մասնաբաժինը նվազել է 3,3 %-ով: Եռյակը եզրափակում է Հռոմը (3,5 %), որտեղ հյուրանոցների պահանջարկը, 2022 թվականի համեմատ, աճել է 43,5 %-ով:

Լավագույն տասնյակում են նաեւ Փարիզը (մասնաբաժինը կազմում է 3,1 %, պահանջարկն աճել է 63,2 %-ով), Ռիմինին (2,9 %, պահանջարկն աճել է գրեթե 10 անգամ), Դուբայը (2,5 %, պահանջարկը նվազել է 7,4 %-ով) Անթալիան (2,1%, պահանջարկը նվազել է 36,4%-ով), Բանգկոկը (1,9 %, պահանջարկն ավելացել է 80 %-ով), Բուդապեշտը (1,7%, պահանջարկն աճել է գրեթե 3 անգամ) եւ Միլանը (1,6%, պահանջարկը նվազել է 30,4 %-ով): Անցյալ տարվա թավշյա սեզոնի համեմատ՝ Ռիմինիում կացարանների պահանջարկն ամենաշատն է աճել. իտալական զբոսաշրջային այս քաղաքում ամրագրումների թիվն ավելացել է 9,7 անգամ: Աճել է նաեւ Սեուլի (4,6 անգամ), Աթենքի (2,8 անգամ), Բուդապեշտի (2,3 անգամ) եւ Մադրիդի (2,2 անգամ) հյուրանոցների նկատմամբ հետաքրքրությունը: Երկու անգամ աճել է ամրագրումների թիվը Աբու Դաբիում, Բաթումիում, Բելգրադում եւ Բաքվում:

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 40 ՃՏՊ. 6 մարդ զոհվել է, 64-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԱՐԵՎՈՐ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏՈՒՄ ՄԻՍ ԿՎԱՃԱՌՎԻ

Ստեփանակերտի մսամթերքի վաճառակետերում օգոստոսի 21-ից վաճառվում է լրացուցիչ ծավալի տավարի եւ խոզի միս՝ 1 կիլոգրամը 4 հազար դրամ առավելագույն արժեքով: Սպեկուլյատիվ գնումները բացառելու համար ներկա կգտնվեն ոստիկանության, Պետական եկամուտների կոմիտեի եւ Պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակիցները: Այս մասին տեղեկացնում է Արցախի տեղեկատվական շտաբը:

«Վերջին օրերին ձեռնարկված կազմակերպչական աշխատանքների շնորհիվ՝ վաղվանից Ստեփանակերտ քաղաքի շուկա կհանվի լրացուցիչ ծավալի մսամթերք՝տավարի եւ խոզի մսի 1 կիլոգրամի առավելագույն արժեքը 4.000 դրամով, որը կփորձենք պահպանել որոշակի ժամանակահատված: Վաճառքը կիրականացվի Ստեփանակերտի մսամթերքի վաճառակետերում, որտեղ սպեկուլյատիվ գնումները բացառելու համար ներկա կգտնվեն ոստիկանության, Պետական եկամուտների կոմիտեի եւ Պետական տեսչությունների կառավարման կոմիտեի աշխատակիցները: Միջոցներ են ձեռնարկվում նաեւ հացի ծավալները հնարավորինս ավելացնելու ուղղությամբ: Չնայած Արցախի շրջափակման հետեւանքով ստեղծված բարդ իրավիճակին՝ ԱՀ կառավարությունը շարունակում է ձեռնարկել բոլոր միջոցները՝ բնակչության ուսերին ընկած ծանրությունը որոշակիորեն մեղմելու ուղղությամբ»,- ասվում է հաղորդագրության մեջ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2023թ.-ի սեպտեմբերի 04-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Թիվ 74 լոտ՝ ոսկյա զարդեր եւ ջարդոն՝ 95,9 գր. ընդհանուր քաշով, որից 47գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 46,9 գր.)՝ 900 հարգի, 992.400 ՀՀ դրամ, 48,9 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 48,7 գր.)՝585 հարգի, 669.200 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը՝ 1.661.600 ՀՀ դրամ:

Թիվ 75 լոտ՝ ոսկյա զարդ՝ 16,2 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 16,1 գր.), 585 հարգի, լոտի մեկնարկային գինը՝ 221.200 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/. հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ, լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ ժամը 9.00-13.00-ն, ք. Երեւան, Կոմիտաս 62 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝ դիմումի հիման վրա:

Հեռ.՝043 00-42-27:

ՄԱՐՏԱՐՎԵՍՏ

ՃԱՆԱՊԱՐՀ՝ ԴԵՊԻ «ՎԻՆԳ ՉՈՒՆ»-Ի ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ավելի քան երեք հարյուր տարի առաջ Հարավային Չինաստանից «Վինգ Չուն» յուրահատուկ մարտարվեստը նրբագեղորեն դուրս եկավ համաշխարհային ասպարեզ: Շաոլինյան տաճարում հինգ վանականների ուժերով ստեղծվում է «Քունգ Ֆու»-ի մի նոր մարտական ուղղվածություն, որն ավելի արդյունավետ էր, քան այդ ժամանակների «Կունգ Ֆու»-ի մյուս ուղղվածությունները: Հետագայում Շաուլինյան տաճարի կործանումից փրկված վանական (միանձնուհի) Նգ Մուին իր աշակերտներից երիտասարդ աղջնակի՝ Իմ Վինգ Չունին է փոխանցում այդ հանճարեղ մարտարվեստը՝ նրան վերածելով ինքնավստահ մարտիկի:Հետագայում մարտարվեստը, ի պատիվ նրա, անվանվում է «Վինգ Չուն»: Մարտարվեստի նպատակն է հնարավորինս արագ ոչնչացնել հակառակորդին: Չինարենից թարգմանաբար նշանակում է «հավերժական գարուն»: Վերջին տարիներին «Վինգ Չուն»-ը մեծ ճանաչում է ձեռք բերել Հայաստանում՝ դառնալով ամենակիրառական մարտարվեստներից մեկը, մեր երկիր բերելով «Վինգ Չուն»-ի նշանավոր վարպետների:

«Վինգ Չուն»-ը իր մեջ կրում է փիլիսոփայական եւ հոգեւոր ասպեկտ: Այն դիտարկվում է ոչ միայն ինքնապաշտպանության ձեւ, այլ նաեւ ապրելակերպ, որն ընդգծում է անհատական աճ, հավատարմություն եւ ներքին հանգստություն:

«Վինգ Չուն»-ի էությունը ներդաշնակ երկակիություն է՝ միաժամանակյա հարձակում եւ պաշտպանություն՝ ստեղծելով անզիջում, սահուն հարձակում: Հավատարիմ զուգընկերոջ փայտե մանեկենի՝ «Muk Yang Jong»-ի օգտագործումը այս մարտարվեստի վարպետներին օգնում է կատարելագործել իրենց տեխնիկան, ժամանակը եւ հասկանալ այս յուրահատուկ պարը:

Չնայած համաշխարհային ասպարեզ դուրս գալուն եւ համաշխարհային հանրաճանաչությանը՝«Վինգ Չուն»-ը հավատարիմ է մնում իր արմատներին: Այն շարունակում է մնալ անթերի ինքնապաշտպանական համակարգ՝ համատեղելով դարավոր իմաստությունը արդիականության հետ: Նրա նրբագեղությունը կայանում է իր պարզության եւ արդյունավետության մեջ՝ դարձնելով այն համապարփակ պար, որը հասանելի է բոլորին՝անկախ տարիքից եւ սեռից:

Հայաստանում «Վինգ Չուն»-ը լայնորեն կիրառվում է ոստիկանության եւ Զինված ուժերի հատուկ նշանակության ստորաբաժանումներում՝ իր՝ ինքնապաշտպանության ուղղվածության եւ իրական կենսական իրավիճակներում արդյունավետ կիրառման շնորհիվ: «Վինգ Չուն»-ը նախատեսված է իրական մարտական իրավիճակների համար, այլ ոչ թե կանոններով կառավարվող սպորտային մենամարտերի համար: Նրա մեթոդները կենտրոնացած են հակառակորդի արագ եւ արդյունավետ չեզոքացմանը, որն իր մեջ ներառում է հարվածներ, որոնք անթույլատրելի են մրցակցային սպորտաձեւերում, քանի որ պարունակում են լուրջ վնասվածքներ ստանալու մեծ ռիսկ: Ի տարբերություն սպորտի ուղղվածություն ունեցող մարտարվեստներին, ինչպիսին են «Տեկվանդո»-ն կամ «Ձյուդո»-ն, «Վինգ Չուն»-ում չկա միավորների հաշվարկի ստանդարտ համակարգ, որը թույլ կտա արդար եւ հետեւողական դատել մրցումների ժամանակ: Դա է այն հիմնական պատճառներից մեկը, որ այն սովորաբար չի կիրառվում որպես մրցակցային մարզաձեւ, եւ թիմակիցների միջեւ ճանաչումը, տարբերությունը ձեռք է բերվում ոչ թե տիտղոսների եւ մրցանակների, այլեւ գնահատականների, աստիճանների եւ, որ ամենակարեւորն է, սեփական տեխնիկայի կատարողականի եւ արդյունքների շնորհիվ: «Վինգ Չուն»-ի երկնակամարի ամենավառ աստղերից է հանդիսանում լեգենդար Բրյուս Լինը:

«Վինգ Չուն»-ի ամենահայտնի դպրոցներից մեկը Կովկասյան տարածաշրջանում գտնվում է այստեղ՝ Երեւանում: Դպրոցի առաջատար մարզիչ է հանդիսանում «Վինգ Չուն»-ի վարպետ Արման Արշակյանը: Արմանին Հայաստանի «Վինգ Չուն» (Ցունի)- «Քունգ Ֆու» ֆեդերացիայի կողմից շնորհվել է «Վինգ Չուն» մարտարվեստի վարպետի կոչում: Նա հայկական հատուկ ջոկատայինների վետերան է եւ, որպես «Վինգ Չուն» վարպետ, Հայաստանում ոստիկանության եւ Զինված ուժերի հատուկ նշանակության զորքերին սովորեցնում է «Վինգ Չուն» մարտարվեստը:

«Ժողովուրդ» օրաթերթը, այս ամենի հետ կապված, զրուցել է Արման Արշակյանի հետ:

-Արման, խնդրում եմ ասել, թե որոնք են Հայաստանում վերջին տարիներին «Վինգ Չուն»-ի հանրաճանաչության կտրուկ աճի պատճառները:

-Ես կարծում եմ, որ մեծամասամբ դա կապված է «Վինգ Չուն»-ի փիլիսոփայական հիմունքների հետ: Այն նպաստում է հանգստությանը, կարգապահությանը եւ ինքնաճանաչմանը: Դրանք հատկություններ են, որոնք անհրաժեշտ են գոյատեւման համար, եւ եկեք նայենք իրականության աչքերին. մեր երկիրը տասնամյակներ շարունակ գտնվել է գոյատեւման ռեժիմում: 2020 թվականի պատերազմի, Արցախի ու Հայաստանի սուվերեն տարածքի վրա մշտական հարձակումների պայմաններում հանրային գիտակցությունը կենտրոնացած է այնպիսի բաների վրա, որոնք օգնում են գոյատեւել բարդ եւ կյանքի համար պոտենցիալ վտանգավոր իրավիճակներում:

-Ի՞նչ է պահանջվում անձից, որպեսզի նա կարողանա այս մարտարվեստի լավագույններից մեկը դառնալ:

-«Վինգ Չուն»-ում «Վարպետ» կամ «Սիֆու» տիտղոսը ունի մեծ կշիռ: Այն բնութագրում է մարդու, որը հասել է մարտարվեստի հմտության եւ ըմբռնման ամենաբարձր մակարդակին եւ իրավունք ունի ուրիշներին սովորեցնել: «Վինգ Չուն»-ի վարպետ դառնալու ճանապարհը ներառում է երկար տարիների ինտենսիվ մարզում եւ նվիրվածություն, ինչպես նաեւ պահանջում է ոչ միայն տեխնիկական հմտություններ, այլեւ արվեստի հիմնական փիլիսոփայությունների եւ սկզբունքների խորը ըմբռնում: Բացի այդ, Վարպետը պետք է մարմնավորի մարզումների հետ կապված այնպիսի արժեքները, ինչպիսիք են հարգանքը, կարգապահությունը, խոնարհությունը եւ ազնվությունը:

-Ինչպե՞ս կբնութագրեք «Վինգ Չուն»-ի վարպետ դառնալու Ձեր ուղին:

-Անձամբ ինձ համար դա խորը անձնական եւ վերափոխման գործընթաց էր, որն իր մեջ ներառում էր ավելի շատ, քան միայն տեխնիկայի ուսուցում: Խոսքը գնում է բնավորության զարգացման, արվեստի հետ խորը կապի ամրապնդման, ուսումնառության ձգտման ու ողջ կյանքի ընթացքում անհատական աճի մասին:

-Պատմե՛ք, խնդրում եմ, Հայաստանի ոստիկանության եւ Զինված ուժերի հատուկ ջոկատների հետ Ձեր աշխատանքի մասին: Ինչպիսի՞ ուսուցում եք Դուք նրանց առաջարկում:

-Մենք մեծ ուշադրություն ենք դարձնում «Վինգ Չուն»-ի փիլիսոփայության, հանգստի արդյունավետության եւ պարզության կոնցեպցիաների ուսուցմանը: Այս տարրերը մնացած ամեն ինչի հիմքն են, այդ թվում՝ մարտարվեստի գործնական կիրառման: Մարզումները ներառում են կպչուն ձեռքերի (Չի Սաո) տեխնիկան, որը զարգացնում է զգայությունը, ռեֆլեքսները եւ թույլ է տալիս մարտիկներին գերազանց կողմնորոշվել մերձամարտում: Ներառում են նաեւ փայտե մանեկենով մարզումներ, սպարինգներ եւ ուրիշ այլ տեխնիկաների ուսուցում:

Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՃԱՆՈՒՑՈՒՄ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Երեւանի հաստոցաշինական արտադրական միավորում» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Շենգավիթ, Արշակունյաց պողոտա, 17/7 հասցեում գտնվող 0,10224 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝70000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 07.09.2023թ.-ին եւ 08.09.2023թ.-ին ժ.12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլնդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 3%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.borsa.am կայքը:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՃԱՆՈՒՑՈՒՄ

Գ

«Ֆլորես» Աճուրդի Տուն» ՍՊԸ-ն (այսուհետ՝ կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Էգիրին» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտը՝

- ք. Երեւան, Ավան, Ռուբինյանց փողոց, 27/56 հասցեում գտնվող 507,8 ք.մ. արտադրամաս եւ 1,54735 հա ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 43000000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝դասական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 07.09.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ.: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է գույքի ընթացիկ մեկնարկային գնի 2%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Ֆլորես» ԱՏ ՍՊԸ-ի բանկային հաշվին («Ամերիաբանկ» ՓԲԸ-ում 1570005285290100 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթը եւ աճուրդի վկայականը:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 52-61-85 հեռախոսահամարով կամ այցելել www.borsa.am կայքը:

ՍՊՈՐՏԱՅԻՆ

ՄԵԴԱԼՆԵՐ՝ ԲՌՆՑՔԱՄԱՐՏՈՒՄ

Սլովենիայում ընթացող կրտսեր տարիքի պատանիների Եվրոպայի առաջնությունում Հայաստանն արդեն ունի 4 մեդալ: Հայրենիք մեդալով կվերադառնան 36 կգ քաշային Աստղիկ Խաչատրյանը, 44 կգ քաշային Լիանա Ժամհարյանը, 46 կգ քաշային, Եվրոպայի գործող չեմպիոն Համեստ Աֆրիկյանը եւ 48 կգ քաշային Անահիտ Հարությունյանը: Մեր մարզուհիները կիսաեզրափակչում են: Տղաների պայքարում Հայաստանի հավաքականը 1/4 եզրափակիչում ունի 11 մասնակից: Հաջորդիվ յուրաքանչյուր հաղթանակի դեպքում մեդալ կապահովենք նաեւ տղաների մրցակցությունում:

ՄԵՍՍԻՆ ԱՊԱՑՈՒՑՈՒՄ Է

ԱՄՆ-ի եւ Մեքսիկայի Լիգաների գավաթը նվաճած ամերիկյան «Ինտեր Մայամիի» արգենտինացի գլխավոր մարզիչ Տատա Մարտինոն խոսել է իր ղեկավարած թիմի 36-ամյա արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսսիի մոտիվացիայի մասին:

«Լեոյի մասին խոսելիս դուք նշում եք, որ նա աշխարհի լավագույն ֆուտբոլիստն է: Ավելի մեծ գովասանք չի կարող լինել: Դա մոտիվացնում է:

Մեսսին ամեն խաղում ապացուցում է, որ աշխարհի լավագույն ֆուտբոլիստն է: Լիոնելը եկել է ՄԼՍ, որպեսզի մրցի եւ հաղթի: Բուսկետսն ու Ալբան ասացին նույնը: Նրանք եկել են այստեղ մրցելու նպատակով: Կարելի է հաղթել կամ պարտվել, բայց նրանք ունեն մրցելու ցանկություն: Հիմա եկել է հաղթելու հերթը»,- Մարտինոյի խոսքը մեջբերում է AS-ը:

ԱՄՆ-ի եւ Մեքսիկայի Լիգաների գավաթի խաղարկության եզրափակիչում «Ինտեր Մայամին» հետխաղային 11-մետրանոցներով հաղթել էր «Նեշվիլին»: Հիմնական ժամանակն ավարտվել էր 1:1 հաշվով: «Ինտեր Մայամիի» գոլը խփել էր Մեսսին: Նա արդյունավետ էր իրացրել նաեւ հետխաղային 11-մետրանոցը:

Մեսսին «Բարսելոնայում» դարձել է Իսպանիայի 10-ակի չեմպիոն, 7-ակի գավաթակիր, 8-ակի սուպերգավաթակիր, Չեմպիոնների լիգայի քառակի գավաթակիր, աշխարհի եռակի ակումբային չեմպիոն եւ Եվրոպայի սուպերգավաթակիր: ՊՍԺ-ում նա դարձել է Ֆրանսիայի կրկնակի չեմպիոն, մեկ անգամ էլ նվաճել է երկրի սուպերգավաթը: Արգենտինայի հավաքականի կազմում Մեսսին դարձել է աշխարհի չեմպիոն, Ամերիկայի գավաթակիր, օլիմպիական չեմպիոն, աշխարհի երիտասարդական չեմպիոն, Հարավային Ամերիկայի եւ Եվրոպայի Ֆինալիսիմա-2022-ի հաղթող:

● *Հունիսի 23-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Սիրո մենյու» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԲԱՆԿ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս է «Ամերիաբանկ»-ը տեղեկացնում իր բաժնետերերին ընդհանուր ժողովի գումարման մասին:

Սարգիս Հարությունյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Ամերիաբանկ»-ը տեղեկացնում է իր բաժնետերերին ընդհանուր ժողովի գումարման մասին առնվազն 15 օրացուցային օր առաջ, եթե այլ բան նախատեսված չէ գործող օրենսդրությամբ:

Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող յուրաքանչյուր բաժնետիրոջն ուղարկվում է գրավոր ծանուցում՝ պատվիրված նամակի տեսքով: Ծանուցումը հրապարակվում է նաեւ բանկի կայքում (www.ameriabank.am)՝ «Ներդրողների հետ փոխհարաբերություններ» բաժնում:

«Ամերիա» բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Շահութաբաժինների վճարման մասին որոշումն ընդունվում է եւ վճարման ձեւը սահմանվում է Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից մինչեւ ֆինանսական տարվան հաջորդող տարվա ապրիլ ամսվա ավարտը՝ ՀՀ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով սահմանված կարգով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ի՞նչ է լինում, երբ դիմում ես Մարդու իրավունքների պաշտպանին:

Միքայել Մնացականյան (22 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Դիմումը ստանալուց անմիջապես հետո այն ուղարկվում է համապատասխան մասնագետի: Լինում են դեպքեր, երբ դիմումում կան հարցեր, որոնք ճշտման կարիք ունեն, եւ այդ դեպքում մասնագետները կապ են հաստատում դիմումատուի հետ: Դիմումը ստանալուց հետո մասնագետը ուսումնասիրում է այն, եւ եթե քո կողմից նշված փաստերը եւ օրենքը թույլ են տալիս, ապա սկսվում է դիմումի քննարկման ընթացակարգ:

ՀՀ ՄԻՊ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Շատ կարեւոր է իմանալ, որ նույնիսկ այն դեպքում, երբ, հաշվի առնելով օրենքի պահանջները, ՄԻՊ-ի գրասենյակը չի կարող սկսել դիմումի քննարկումը, ապա իրենք անպայման կուղղորդեն դիմումատուին այն մարմին, որը կարող է տվյալ պարագայում պաշտպանել անձի իրավունքները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Լեհաստանի Սիլեսիա քաղաքում օգոստոսի 10-20-ն անցկացվել է Աստղագիտության եւ աստղաֆիզիկայի միջազգային 16-րդ օլիմպիադան, որին մասնակցել է 50 երկրի 241 աշակերտ:

Օլիմպիադային Հայաստանի թիմը ներկայացրել են Ա. Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտներ Արեգ Բարսեղյանը, Վյաչեսլավ Պետրոսյանը, Արտավազդ Հարությունյանը եւ Մարիա Առաքելյանը: ՀՀ թիմից արծաթե մեդալի է արժանացել Վյաչեսլավ Պետրոսյանը, իսկ բրոնզե մեդալի՝ Արտավազդ Հարությունյանը: Արեգ Բարսեղյանը եւ Մարիա Առաքելյանն արժանացել են գովասանագրերի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+12 + 15 +25 + 29
Կոտայքի լեռներ	+11 + 13 +26 + 29
Կոտայքի նախալեռներ	+20 + 21 +30 + 33
Գեղարքունիք	+11 + 14 +20 + 24
Լոռի	+10 + 14 +26 + 30
Տավուշ	+15 + 20 +28 + 32
Արագածոտնի լեռներ	+ 9 + 11 +25 + 27
Արագածոտնի նախալեռներ	+17 + 22 +32 + 36

Արարատ	+17 + 21 +35 + 37
Արմավիր	+15 + 17 +35 + 37
Վայոց ձորի լեռներ	+10 + 12 +24 + 27
Վայոց ձորի նախալեռներ	+17 + 21 +35 + 37
Սյունիքի հովիտներ	+18 + 22 +32 + 34
Սյունիքի նախալեռներ	+11 + 14 +26 + 29
ԼՂՀ	+17 + 21 +30 + 33
Երեւան	+19 + 21 +31 + 33

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.8.2023**
Հասցեն՝ Գերաբունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Հանքարծոնյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*